




ԳՐԱԿԱՆ . — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ . — ՊԱՏՄԱԿԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

1843-1897 ՀԱՏՈՐ ՄԵ ՅՈՒՆՈՒԱՐ

Մ. ԽՈՐԵՆԱՑԻ ԵՒ ԼԱ ԿՐՈՋ

ՄԱՐԿԱՆ ԽՈՐԵՆԱՑԻ ՆԵՐԿԱՅԱՅՐ-
ւած է զատաւորաց առջեւ. հարկ
է ուրեմն որ փաստաբանք խնամով
ուղղեն զիրար՝ թէ՛ ամբաստանելու և
թէ՛ պաշտպանելու մէջ:

Մեր բարեկամն Գ. Խալաթեանց, իւր ուս-
սերէն լեզուով ապագրած Հայկական վի-
պասանոթիւն զեղեցիկ զբքին մէջ, կը յի-
շատակէ նաեւ զայդդիացոյն Լա Կրոզի խօս-
քերը, որ կրակաբան լեզու կը բանեցնէր
անոնց գէմ՝ որոց ինքը չէր համաձայներ.
բայց յաւելմամբ և յապաւմամբ՝ հայագիտին

իրական խօսքին ուրիշ զոյն մի կ'ընծայուի:
Իրաւ է՝ որ Լա Կրոզ իւր բարեկամաց զրե-
ւով՝ գործածեր է այն բառերը, զորս Մով-
սիսի քննադատն յառաջ կը բերէ. բայց ի-
րաւ է նաեւ, որ Լա Կրոզ՝ մահուան մօտե-
ցած՝ ուրիշ զրքի մը մէջ, ուր կը խօսի Ե-
թովպոյից և Հայաստանի քրիստոնէոսքեան
պատմութեան վրայ (Histoire du Chris-
tianisme d'Ethiopie et d'Arménie),
աւելի խոհեմ և զգուշաւոր եղած է:
Այս վերջին գիրքս 1739ին լոյս տեսած է
Այայի մէջ. իսկ զրոց ընծայականն առ քա-
ղաքաւանդեց Գրուսիոյ (որ յետոյ քաջածա-
նօթ մեծն Փրիզերիկ պիտի լինէր), գրուած
է նախընթաց տարւոյն զեկտեմբերի մէջ:
Սա է ուրեմն Լա Կրոզի ստույգ և հասա-
րակաց համար ըրած կտակն, ինչպէս որ փա-
կաքելի էր: Եթէ մէկն այդ գիրքը ձեռքը
չունենալով՝ անոր վերնագրէն մեծ բանի յոյս

ունենայ՝ թող չափաւորէ և հանգարտէ իւր յայտը՝ վասն զի մէջը շատ քիչ բան խօսուած է սրբազան—Հայաստանի մասին, մինչև անհամ Ղուասորչի անունն իսկ յիշուած չէ. իբրև դատարկաբաններու մէջ եղած խօսակցութիւն մի, անպարար կը սկսի և միշտ սկըսելու հետ է, առանց վերջը բերելու։ Իր բովանդակ գրածներուն մէջ զուցէ ամենէն աւելի խորթելի լսուին այն խօսքերը, զորս իբր պատմաբան և մարգարէ՝ կը գրուէր.

« Ce n'est pas à tort que les Arméniens se pleignent des injustices qu'on leur a faites, et qu'on leur fait encore tous les jours ». այսինքն, « Անիրաւ տեղ չէ որ Հայերը կը գանգատին անցելոյն մէջ իրենց եղած անիրաւութեանց դէմ, որք և մինչև ցարդ միշտ կը շարունակուին ».

Խօսքը աստուածաբաններու վրայ էր։

Իրաւամբ զարմանք կը յայտնէ Լա կրող Շարտէնի վրայ, որ իւր ժամանակին ըսած էր՝ թէ հայերէնն միայն եօթը դարերէ ի վեր կենք ունի. դարձեալ թէ վրդոյի վրայ (որուն յետոյ համաձայնեցաւ նաև Տալէուհիէ), որ կը հաստատէր թէ հայկական զբարութիւնը զրի առնելու արուեստը չորս հաւրիւ տարիներէ առաջ չի կար. և հակառակողները յաղթահարել ուզելով կը յիշատակէ Ս. Գիրքը, որոյ վայելչաբան թարգմանութիւնն եղած էր « Քրիստոսի Տեառն մերոյ 412 թուականին ժամանակները — environ l'an 412 de N. S. J. C. » (էջ. 33), յետոյ իւր խօսքը հետեւեալ տողերով կը շարունակէ, զորս լաւ է գլխէն մինչև վերջը կարդալ¹.

1. On trouve, outre cela, l'ouvrage d'un auteur, pour lequel les Arméniens ont beaucoup d'estime. C'est Moïse de Choren, auteur que l'on rapporte au cinquième siècle. Je le crois plus récent, quoique pourtant il ait quelque antiquité, son style arménien étant pur, mais extrêmement mêlé de faibles. Il a été imprimé deux fois: premièrement en arménien à Amsterdam en 80: depuis cette édition, deux doctes anglais, Guillaume et Georges Whiston, fils du célèbre professeur du même nom, qui a fait tant de bruit en Angleterre, l'ont fait imprimer en très beaux

« Բաց աստի (Ս. Գիրքէն) ուրիշ գրուած « մ'ալ կը գտնուի, ընծայուած այնպիսի « մատենադրի մը, որոյ վրայ հայք մեծ « համարումն ունին. այս հեղինակն է Մովսէս « սէս Խորենացի, զոր հինգերորդ դարու մէջ « ապրած կը կարծեն. իսկ ես աւելի յետ « նագոյն կը համարիմ՝ զինքը, թէպէտ և « բաւական հնագոյն ժամանակաւ, որովհետեւ « տես իւր հայկական ոճը մաքուր է, բայց « շատ առասպելախառն։ Երկու անգամ ալ « պարզուած է. նախ, հայերէն՝ Ամստերդա « մի մէջ՝ ութածալ, և յետոյ երկրորդ ան « դամ՝ երկու անգլիացի գիտնականք հոմա « լիէլմ և Գէորգ Վիստոն, որվք համա « նուն հռչակաւոր վարժապետին¹, որ մեծ « համբաւ ունեցաւ Անգլիոյ մէջ, տպագրե « ցին զայն հայկական շատ գեղեցիկ տառե « լով, հանդերձ ամենընտիր լատիներէն « թարգմանութեամբ։ Որչափ և վիստոն « եղբարք բարի համարումն ցոյց կու տան « այս մատենադրին նկատմամբ, սակայն այսու « հանգերձ անկարող եղան չի խոստովանելու՝ « որ նա այնքան վստահանալի չէ։ Քիչ յե « տոյ պիտի խօսիմ՝ Ներսէս կաթողիկոսին « վրայ, որ ռոտանաւոր համառօտութիւն մի « գրած է Մովսիսի պատմութեան։ Այս

caractères arméniens avec une excellente traduction latine. Tout bien intentionnés qu'ils sont pour cet auteur, ils n'ont pas pu dissimuler le peu de fond qu'on peut faire de lui. Je parlerai bientôt du patriarche Nersès, qui a donné en vers un abrégé de l'Histoire de Moïse. Ce patriarche a vécu dans le douzième siècle, et il est mort l'an de Jésus-Christ onze cent septante trois; ce qui est une preuve positive, je ne dis pas de l'authenticité, mais de l'antiquité de l'Histoire de Moïse: (p. 335).

1. Արշակոյ Գուլիէլմ Վիստոն իրենց հայրէ հայերէն լեզուն սովորած էր, թէ միայն նոյն ազգին սրբազան մատենադրութեամբ կը զբաղէր. իւր խօսքերն երկգիծի են, զորս լաւ է ուշադրութեան առնուլ։ Ուշադրելով առ Լա կրող Ս. Պապկոսի անվանի թղթերը, զորս Լա կրող յետոյ թարգմանեց (Գաղատիկ Կ. 327), Վիստոն կը գրէ իրեն 1723ին, « Videbis quantum hac occasione ipse et filii mei profecerimus in rebus armenicis indagandis », այսինքն է. « Պիտի տեսնես որչափ այս դեպքիս մէջ ես ինչև և որդիս շան ի զորձ զբնից հայկական իրերը նոստեցուի » (THESS. EPIST. I. 350).

« կաթողիկոսն սպրեցաւ երկոտասներորդ
« դարու մէջ, և մեռաւ Քրիստոսի 1173
« թուականին. որով մեզի հաստատուն աւ-
« պացոյց մի կ'ընծայէ Մովսիսի պատմաւ-
« թեան՝ չրսեմ վաւերականութեան՝ այլ
« հնութեան մասին » (էջ 335):

Լա կրող 1730 տարւոյն մէջ (ինչպէս
կը տեսնուի 'ի Գաւնաբանի նամակաւնոյ,
Գ. 281, առ որ կը հրաւիրէ մեր ուշադրու-
թիւնը Գ. թալաթեանց, էջ 5) կ'ըսէր՝ որ
Մովսէս՝ իններորդ կամ մանաւանդ թէ տաս-
ներորդ դարուն կը վերաբերի. իսկ քանի մը
տարի վերջէ՝ նոյնը բոլորովին հաստատելու
յանդիմութիւն չի ցուցներ: Առասպելաբան
իննելու մասին իւր կարծիքը չի փոխեր: Բայց
մեզ՝ ութնետասներորդ դարու մարդիկս՝ հար-
ցնենք, թէ արդեօք այնքան խիստ դատաւոր
պէ՛տք է լինինք այն ամէն հին հեղինակաց
դէմ, որոց գրութեանն ոչ իրենց տեսածներն
են և ոչ լսածները: Անսովոր բանի մ'աւ-
ջե կանգ կ'առնունք, կը դեպէնք. բայց նոյն
իսկ օրինաւոր, գիւրին և սովորական բանե-
րու մէջ՝ աչքերնիս փակելով՝ միթէ գիտակ-
ցաբար վատմ' հենք թէ արդարադատ վճիռ
կու տանք: — Այս առիթ իմ նպատակէս
դուրս կ'անցնիմ. իմ դիտաւորութիւնս է մի-
այն ներկայացնել Լա կրողի տպագրուած
խօսքերը, և զանոնք բաղդատութեան առ-
նուկ իւր այն խօսքերուն հետ, որք թէպէտ
և մահուրէն յետոյ հրատարակուցան, բայց
շատ առաջ իւր գրչէն դուրս ելեր էին:

Հոս կանգ չենք առնուլ: Յաւ կը յայտ-
նէր թալաթեանց որ իւր ձեռքը չունի Ս.
Ներսիսի ոտանաւորը՝ Լա կրողէն տպագր-
ուած: — Այսպիսի տպագրութիւն կը գրա-
նուի՝ աշխարհիս վրայ: Լա կրող իւր վերո-
յիշեալ Պատմութեան մէջ ուրիշ բան չի
յիշեալ՝ բայց թէ, « notes manuscrites sur
le poème historique du patriarche Ner-
sès », այսինքն՝ ձեռագիր ժանօրոյրիսնէր
Ներսէս կաթողիկոսի պատմական ոտանա-
ւորին վրայ, որ և ազնուական առատածեռ-
նութեամբ կը յաւելու: Թէ պատրաստ է

հաղորդելու զանոնք՝ առանց բնաւ դժուա-
րութեան՝ որոց որ փափաք յայտնեն տես-
նելու (էջ 356): Հետեաբար այն ատեն
գիրքը տպագրուած չէր, և բնաւ իսկ չի հրա-
տարակուցաւ:

Որ և իցէ գիրք, կատարեալ թէ անկա-
տար, իւր օգտակարութիւնն ունի. և մենք
համաձայն մեր թալաթեանցի՝ կը փափաքինք
որ Լա կրողեան հայերէն բազմաթիւ քննու-
թեան առնուէր, և նորա լաւ և վատ մա-
սերը ցոյց տրուէին: Չափազանցօրէն առատ
կը համարենք այն յոյսը, որով կը սպասու-
էր թէ՝ մէկուկէս դար վրան անցնելով հան-
դերձ՝ այդ բազմաթիւ հին և նոր հայագիտաց
համար կարենայ օգտակէտ արդիւնք մի յա-
ռաջ բերել. բայց զիտութեանց պատմութիւնն
շատ առատածեռն է, և պատիւ կ'ընծայէ
պատուաբեր աշխատութեան մի, թէպէտ և
ժամանակէն ուշ յայտնուի: Լա կրող ինքն՝
զեռ շատ նուազ կը յուսար, երբ կ'ըսէ՝ թէ
« Հայկական բառագիրքս... ինծի տառուեր-
կու տարւան աշխատանք պատճառեց. թէ-
պէտ և բնաւ զիտաւորութիւն ունեցած չեմ
տպագրել տալու, բայց նաև արտաքսասպէս
ալ քիչ յոյս կրեմ՝ ունենալ՝ հասարակաց
ընծայելու այս աշխատութիւնս » (էջ 344):

Վերոյիշեալ քաղղիացոյն բնագիրներու
մասին ունեցած հմտութեան վրայ չեմ խօ-
սիր, որովհետեւ այդ բանին համար ձեռքս
հաստատաբար չունիմ. այսպիսի միայն ըսեմ,
թէ երբեմն եռանդ կայ՝ որ շատ աւելի գո-
վելի է քան իւր յառաջ բերելիք արդիւնքը:
Բայց իւր հանած հետեւութեանց կանխահա-
տութեան և իւր քննադատութեանց անդգու-
շութեան վրայ՝ կը համարձակիմ կասկածե-
լու: Ահաւասիկ ինչ որ իրեն 1739 թուա-
կանին զրքուկէն կրնայ մէջ բերուիլ, չօգտ-
լով ինքնիշխանաբար վճիռ հատարել, վասն
զի ուրիշները կրնան ազատաբար ինձ հետ
համամիտ և կամ տարաձայն լինել:

Ահա այսպէս կը խօսի Լա կրող հայերէն

1. Je les communiquerai sans peine à quicon-
que souhaitera de les voir: (p. 356).

1. Le dictionnaire arménien... m'a coûté douze
ans de travail, quoique je n'aie point eu en vue
l'impression, sous le peu d'apparence que j'au-
rais eu à espérer de donner cet ouvrage au pu-
blic: (p. 344).

լեզուի վրայ. « Ես մեծ համանմանութիւն գտեր եմ հայերէն լեզուին և Մարաց բարբառոյն նշխարաց մէջ՝ որք հասեր են մեզի »¹, լեզու մի՛ որ բնաւ չի տարբերի, ըստ լա Կրոզի, պարսկաց լեզուն:

Երեք հատ օրինակ մէջ կը բերէ այս տրամար նմանութեանց, այն թագաւորաց անուններէն քաղելով՝ զորս Հերոդոտ յիշած է. այսինքն՝ « Διόσχοης (Her. I. 96) կը համապատասխանէ ըստ ամենայնի հայերէն Daïéak (գայեակ) բառին, որ կը նշանակէ խնամող և կամ ստնտու »² (էջ 319). զարնեալ Φραόρτης և Κουξάργης (Փրաւորտ և Կիաքսար) « այնպիսի անուններ կը կրեն՝ զորս... զիւրին է հայերենով բացատրել, մինչդեռ բնաւ ուրիշ լեզուով չէ կարելի »³ (էջ 329):

Անաղար և յիմար բան կը լինէր պահանջել՝ որ լա Կրոզ իւր զարուս մէջ կարող լինէր աւելի արատես լինել, և աչք մը ձգել ուրիշ իրանեան լեզուաց վրայ, և կամ ձայնական կանոնաց հաւաստարիմ լինել, որոց համար այն ատեն ոչ կանոնադրեր կային և ոչ ալ օրէնսդիրներ: — Բայց նա յառաջ երթալով՝ միթէ չափէն ալ աւելի անպիկ չանցնիր:

Մարաց վերջին թագաւորն « Աստիագէս է, կ'ըսէ. անուն մի՛ որ ճշգիւ կը նշանակէ հայերենի մէջ Աստուծոյ անունը: Սոյորաբար աստ—ված (ast-vades) կը հնչուի. բայց վերջին տառն ժամանակաւ յունական դասակարգ մերձաւոր հնչումն ունեցած է »⁴:

1. J'ai découvert une grande conformité entre la langue arménienne et le peu que nous reste de celle des Mèdes.

2. Διόσχοης répond parfaitement au mot arménien Daïéak, qui signifie un Tuteur ou un Nourricier: (p. 319).

3. Φραόρτης et Κουξάργης portent des noms, qui sont... aisés à expliquer par l'arménien; ce qu'on ne peut faire dans aucune autre langue: (p. 329).

4. C'est Astyagès, mot qui signifie précisément en arménien le nom de Dieu. On prononce ordinairement ast-vades; mais la dernière lettre a eu autrefois une prononciation approchant de gamma des Grecs: (p. 331).

(էջ 331). և կ'ապահովէ իբր թէ այդ բանը զանազան օրինակներով ապացուցած լինի իւր բառապարոջ յառաջարանին մէջ: Բայց մենք թողյով երկրիս և երկինից աստուածներն իւրենց աեղը, (ի՜նչ աստիճան ալ լինի մարդկային ուղեղնիկում մէջ շողջըրթութիւնն և այլաբանութիւնն, չկայ մէկը որ զահի մը վրայ բազմած Διός կամ Deus թագաւորի մը խունկ ծիած լինի, իրեն Zeús կամ Jupiter « Արամագզ կամ Զեւս անունն » ընծայելով), ի՞նչեք գէպ ի ստորնագոյն իրերը և բանի, որ այն վերայիշեալ դասակարգին մէջ գաղղիացին կը տեսնէ յունական γε, γι և γυ, զորս հաւանօրէն իւր գաղղիական լեզուի հնչմամբ կը կարդար՝ մոռնալով հելլենական սովորութիւնը:

Ընդհանուր լեզուաց մասին ալ լա Կրոզի մեզի տուած տեղեկութիւնները ասկէց աւելի չեն: Կը տեսնէ որ Էզրի և Նեմէմայ գրոց մէջ մարական բառեր կը գտնուին, զոր օրինակ, փարտաւմ, պատգամ, պասգամ, (phartam, patgen, patgam), և այլն. այս բառերը « կը գտնուին նաև այսօր հայերենի մէջ »¹, կ'ըսէ (էջ 332):

Վերջ տանք խօսքերնուս Արիստոփանի յիշատակութեամբ: Ակառնացոյն մէջ (տող 100) կը գտնուի տող մի, զոր քերթողն՝ պարսիկ զենպանաւորին՝ Պսեւդարտաբայի (ակն բազաւորի) բերանը կը զնէ՝² Այո

1. (Qui) subsistent encore aujourd'hui dans la langue arménienne; (p. 332). Աչ երեք յիշեալ բառերու նմանակն համապատասխանողն են հայերենի մէջ փարթմ, պատգմ, որոց առաջնոյն մէջ ք = քերթուր և ք = th զուգադասութեան հետ, և երկրորդին մէջ gen = ցին զազդիական արտասանութեամբ եզրէ է հնչ:

2. Այս տողիս վերջին մեկնիչն անանուն անգլիացի մ'է. Իւր գրութեան հը գտնուի Քարթի Մարտիանոսի Հարիւրի մէջ (Classical Review, London 1887, vol. I. p. 204): Ստուգուած բան չէ և ոչ իսկ եւս անսկան է, որ Արիստոփան սանակրիտ լեզուին ծանօթ լինէր. իսկ մենք զուարեալի բառախաղ մի կուրեք վէտայի լեզուի գործածութիւնը պարսիկ զենպանին համատու ճառիկին մէջ: Պատի մը ձեռագրէր օրինակաց հեռեւութեամբ՝ վերայիշեալ անանօթ մեկնիչը կը կարգայ

ισταμαυν εβαρεαν απισσωνα σατρα
և նեզդական լեզուով կը նշանադէ
iyarti mam xarxá na piçuna satrá


տեղ՝ տողին վերջը՝ կը գտնենք $\sigma\acute{\alpha}\tau\rho\alpha$ (սա-
տրա) բառը՝ թարգմանուած մեծ արքային
(էջ. 532), յորմէ կը ծագի նաև սատրա-
պա (satrapa) բառն, որ Արիստոտելի բն-
ծայուած Յաղագս աշխարհի գործոյն մէջ
(Գլ. 2.) կը մեկնուի գերի մեծի արքային
(էջ 332)։

Լա կրող չի տարակուսիր Հայոց միաբը-
նակ լինելուն վրայ, և ազատ համարձակ ի-
րենց քրիստոնեայ անունը կու տայ. բայց
նոյնը « չեմ համարձակիր, կ'ըսէ, ընելու
Սպանիացոց և Լուսիտանացոց համար »
(էջ. 356)։ Ով որ այդ բանին պատճառները
չուսով չըմբռնէ, թող նորա գրքին մէջ ու-
րոնէ ։

Ե. Տ Ե Զ Ա.

բան առ բան թարգմանելով. « Կ'առաքէ զիս Քահրէս,
իվ եղեմուսուրգ բնակին »։ Ամբողջ հեղինակն է, բայց
ի թագաւորի անունէն. և այս անուան պակասութիւնն
կ'առաջնորդէ մեզ առ ին պարսկերէնն Khsayārsā.
Շարունակելով բառախաղը կարելի է կարգաւ *քիսայարս*,
« Քահրէսն զիս կ'առաքէ » արգարե ոչ շար գոն »,
այսինքն՝ ապաով եղէք որ վատանայի ոնէ մի եմ։
Այսպէս ահա Լա կրող պիտի տեսնէ որ իւր $\sigma\acute{\alpha}\tau\rho\alpha$ -ն,
որոյ վրայ վատանացեր էր՝ դադարուեր է։

1. Je n'oserais dire la même chose des Espa-
gnols et des Portugais. (p. 356). պատճառն այն
է՝ որ յիշեալ աղբիւրը կաթողիկէ անուան ներքէ՝ նոր-
աշանդ Լա կրողի կրօնական համոզմանց արամազծա-
պէս հակառակ համոզմունք ունէին։



Ի Ո Ր Հ Ր Դ Ա Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

Ե Ա Ծ Գ Ե Զ Բ Ա Ծ Բ Ա Զ

(Շար. տես. աստ. ԾԴ, յէջ 530)

Դ

ԵՂԻՇԷ ՈՒՆԷՒՐ ՕՏԱՐ ԱՂԲԻՐԻ



ՍԵՐ օրերը քննադատական առ-
կարէզն ընտրողաց համար հետե-
ւելի նորոձեւութեանց առաջինն է՝
հասի խել առնուլ քննելի գործն այն
անձին ձեռքէն, ում կ'ընծայուէր, և
ապա դատափետել զայն։ Այդպէս Ի
Հրապարակ եկաւ Տէրպօղոսեանի սկզբան՝
« Եղիշէի պատմութեան աղբիւրն » անուն
յօդուածովն*։

Նա գտեր էր « Հիմքեր », որոց համեմատ
« սխալ է՝ Եղիշէի Վարդանանց պատմու-
թիւնը 451 թուի պատերազմին մասնակցող
անձին, Եղիշէին վերագրելը » Նրա հեղի-
նակը ուշ ժամանակի պատմիչ է, և իւր
ձեռին ունեցել է գրաւոր աղբիւր, որից
օգտուել է**։ Իսկ ի մեզ այդ « Հիմքերն »
յառաջ թերւած էին այս համոզումն, թէ ինքն
Եղիշէն է իւր աղբիւր՝ գէթ այն մասանց
մէջ՝ որոց վերայ խնդիր կը հանէր քննա-
դատը։ Այդոք էին, առաջին՝ Եղիշէի և Ղա-
զարայ երկրորդ դրուագի նախարարական
ցանկերը. երկրորդ՝ ի Բիւզանդիոն յղուած
պատգամաւորութիւնը. և երրորդ՝ աղուանից
ուղարկուած օգնութիւնը։

Թէ՛ արդեօք յանուն Եղիշէի մեզ հատած

* Հանդէս տւաւ. 1893, Թիւ Գ, 8, 4։

** Նոյնը հաստատեց ևս Հանդիսի խմբագիրը Ժամու-
թութիւնում մի, խոստանալով ուրիշ անգամ ապացու-
ցանել զայն։ Բայց քննադատն իւր զիւռէն այս տարի
ուճացած կը թուի, (այս պատճառաւ յետաձգեցինք
մենք ասոր պատասխանն, իբրեւ այլ ևս երկրորդա-
կան խնդիր քննադատին համար), թէ ևս չէ բարորդին
հրաժարած. նոր քննադատութեան մէջ զիս կը զբէ-
« Եղիշէ, ով որ էլ լինի այդ անուան առկ ծածկուած ».
կամ « Եղիշէի պատմութեան հեղինակը »։